

ՏԵՐԻՆՈՒԹԻՒՆ «ՆՈՐ-ՕՐ»

ԳՐԱՐ ԿԱՐ ԲՂՔԱՅՈՒԹԻՒՆ  
ՈՒՂՋԵՆ ԱՌ  
ՏԵՐԻՆՈՒԹԻՒՆ «ՆՈՐ-ՕՐ» ԼՐԱԳՐԻ  
ԳԱՀԻՐԷ

Direction du journal  
NOR-OR  
Caire

Ձեռագրերն են չեն կարճակր,  
ԱՐՏՈՒՍԱՏԻ Կ. ՄԻՆԻՆԻ

# ՆՈՐ-ՕՐ

ՀԱՐԱՅԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ ՀԱՐԱՅ ՕՐԵՐԸ

ՎԵՐԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ ԴՐՏ. ՈՂՋ  
Դանիւ 1/ Աւմար վեցամսեայ 20  
" " Երամսեայ 12  
Երջակայից 1 վեցամսեայ 25

ԱՐՏԱՆՉՄԱՆԻ ՀԱՐԱՅ  
Վեցամսեայ . . . Ֆրանկ 7

ԲՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՐԱՅ  
Վեցամսեայ . . . Բուրժի 3

ԴԱՅՆԱՆՈՐԴԱԳՐՆԸ ԿԱՆՈՒԿ Է  
ԵՒ ԲՂՔԱՅՈՒԹԻՒՆ ՍԱԹԲԸ  
Խմբագրութեան վրայ է

## «ՆՈՐ-ՕՐ»

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿՐԱՍՆԱԿԱՆ  
ԳՐԱՍԻՐԱՅ ԱԿՈՒՄԲԻՆ

Լսարան-Ընթ. ընկերութեան Խառն  
Ժողովը և «Նոր-Օր» խմբակը վարչ-  
ութեան միջև գոյացած համաձայնու-  
թեան համեմատ «Նոր-Օր» այսօրու-  
նէ կը դադարի Լսարան-Ընթերցատան  
սեպհակամութիւնը ըլլալէ :

Ահաւասիկ երկուստեք փոխանակ-  
ուած պաշտօնական գրութիւններն  
այս մասին :

22 Յունիս 1901

«Նոր-Օր»-ի փոխանակ-  
ութեան Լսարան-Ընթերցատան  
Կրասնակաճ Կրասնակաճ

Ստ

Նկատելով որ «Նոր-Օր»-ի առաջին տա-  
րեքը լրացած է, ինչպէս նաև ընկե-  
րութեան ընթ. ժողովը և գրատ. շարքու-  
թեան միջև 3 Կիտեմբեր 1900 թուա-  
կանին կնքուած պայմանագրի պայմանա-  
ժամը, ընկերութեան Մարտ-Դիւանը և  
գործադիր ժողովը երէկ երեկոյ խառն ժո-  
ղով գումարեցին և «Նոր-Օր»-ի վերջին թը-  
նուցմէ մէջ զայն շարունակելու օրը տը-  
րամադրութիւնները մկատողութեամբ առնե-  
լով հետևեալ որոշումները տուին :

1. — Խառն ժողովը արգելք չը տեսներ  
«Նոր-Օր»-ի շարունակութեանը և կը հաւա-  
ժի որ «Նոր-Օր», այսօրուան թուականէն  
սկսեալ հրատարակուի օրը բարոյական և  
նկարագրական պատասխանատուութեամբ  
ներքև :

2. — Վերոյիշեալ հիման վրայ «Նոր-  
Օր» կը դադարի ընկերութեան սեպհա-  
կամութիւնը ըլլալէ, միայն թէ ընկերու-  
թիւնն իրեն կը վերապահէ «Նոր-Օր»-ի ա-  
նունը և այն օրը որ դադարէ թերթը  
շարունակելէ, օրը պարտք կը դնէ Քլիքէն  
վերադարձնել ընկերութեան :

3. — Ընկերութեան վերաբերեալ բոլոր  
հրատարակութիւնները ձրիաբար հիւրըմ-  
կալուին «Նոր-Օր»-ի մէջ :

4. — «Նոր-Օր»-ի հետ փոխանակուած  
բոլոր թերթերը Լսարան-Ընթերցատան տը-  
րամադրութեան տակ դրուին :

Ըստ վերոյիշեալ պայմանագրութեան  
լրացած շրջանին մէջ ընկերութիւնն պա-  
տասխանատուութեանը զերծ կը մկատէ ինք-  
զինք հաշուական ու է գործառնութիւններ-  
ը և զմահատելով այս առթիւ օրը ըրած  
հիւսթական և բարոյական գոհողութիւնները  
կուգայ յամուծ ընկերութեան յայտնել իւր  
գոհողութիւնը և շնորհակալեաց հա-  
ւաստիքն :

Կար և յաջողութիւն մաղթելով օրը կը  
խնդրենք որ բարեհաճիք սոյն գրութիւնը  
հրատարակել «Նոր-Օր»-ի յառաջիկայ թը-  
նուցմէ մէջ :

Ընդհանուր ժողովը  
Ատենադպիր Ատենապետ  
Յ. ՄԱՐԶՊԱՆԵԱՆ Է. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ  
Գործադիր ժողովը  
Ատենադպիր Ատենապետ  
Ա. ՁԱՐԵՆԵԱՆ Ս. ՕՏԱՊԱՇԵԱՆ  
Անդամք Գործադիր ժողովը  
Կ. ՁՈՂԻԱՔԵԱՆ Կ. ԵՐԶՆԿԱՏԵԱՆ  
ԱՐՏԱՆՉՄ. Յ. ՅՈՂԱՅԵԱՆ

22 Յունիս 1901

Մեծ. համարձուց. Գ. Գեղապետ  
Ատենապետ ընթ. ժողովը  
Լսարան-Ընթ. ընկերութեան Աստ  
ՏԷՐ.

Ե պատուիրակի օրը մերկայ 22 թիւ պաշ-  
տօնագրին՝ որով կը հաղորդէր ինձ խառն  
ժողովը կողմէ «Նոր-Օր»-ի մասին  
տրուած որոշումները, կը փութամ յայ-  
տարարելու թէ այդ որոշումները առանց  
ո և է առարկութեան հոյնութեամբ ըն-  
դունելի են իմ կողմէ :

Բարեբաղդաբար ժողովը որոշումը կը  
զուգահիսի այնպիսի յարմար առիթի մը  
որ արդէն Գրասխանը Ակումբը մը հիմնե-  
լու ձեռնարկած են, որով պիտի կրնամ  
«Նոր-Օր»-ը յիշեալ ակումբին սեպհակա-  
մութիւնը հոչակել :

Մտամ յարգածք  
Ս. Ս. ՓԱՔԱՅԱՆ

## Բ. ՏԱՐԵՇՐՁԱՆ

«ՆՈՐ-ՕՐ»

Այս օրուան սկսեալ «Նոր-Օր»  
Գրասխանը Ակումբի սեպհակամութիւ-  
նը ըլլալով, շարունակութիւնը վերած-  
ուած է, և պիտի լոյս տեսնէ շարաթ  
օրերը :

Տարեկան բաժանորդագրութիւնը  
շնչուած է :

Եղիպտոսի համար  
Վեցամսեայ 20 դահ. ողջ  
Եռամսեայ 12 " "  
Կապիտալ համար  
Վեցամսեայ 3 բուպի  
Արատաստանի համար  
Վեցամսեայ 7 ֆրանկ

Ձեռքէ պիտի ծախուի 1 դահ. աղջ.

Ամէն բանէ առաջ ներդրումութիւ-  
նը կը խնդրենք մեր արդոյ բաժա-  
նորդներուն՝ «Նոր-Օր»-ի նախորդ տու-  
րիչը միայն ընթացքին մէջ երբեմն պա-  
տահած յապարակութեան համար,  
որոնց վարչութեան կամքէն անկախ  
պատահաններէ ծալած ըլլալն կար-  
ծեմ ընթերցողներուն ևս ծանօթ ըլլա-  
լու են Արատաստանի մէջ գրաշա-  
րական տաղանայը միթէ՝ այդ  
պատահաններուն գլխաւորը չի կըր-  
նայ համարուի :

Միևնոյն անպատահանութիւնները չի  
կրկնուած տեսնելու միակ փափարով  
է որ «Նոր-Օր» շարաթաթերթի վե-  
րածեցինք, բաժնեգրի փոքրիկ փո-  
փոխութեամբ մը, նկատի ունենալով  
որ «Նոր-Օր»-ի ծալած գրեթէ կըրկ-  
նապատահան է եղիպտոսի մէջ շարաթը  
երկու անգամ հրատարակուած թեր-  
թերուն :

Մեր ամենամեծ ջանքը պիտի ըլլայ  
«Նոր-Օր»-ը ընել իսկապէս ազգային  
օգտակար թերթ մը, ըստ կարելոյն  
ճոխ, շահեկան և խնամուած պարունա-  
կութեամբ, լուրերու առատութեամբ,  
թերթ մը որ միանգամայն արձայանց  
հանդիսանայ ժողովրդի ազգայնաբար-  
տուններուն :

Կը յուսանք թէ ընթերցողներ հա-  
տարակութիւնը չպիտի զննայ մեզ իր  
համակրանքը ինչպէս անցիկին մէջ,  
որուն ապաւինած միայն՝ պիտի կու-  
րենանք անկողով ատկունութեամբ առ-  
նել այս ծանր բեռը :

Ուրախ պիտի ըլլայինք եթէ՝ Գրա-  
սխանայ Ակումբին որուն կազմակեր-  
պութեանը ձեռնարկած եմք, սիրէին  
մասնակցել մեր գրատեսչ ազգայիննե-  
րը, միշտ փոքրագրութեան հետ, միայն  
համարութեան շահը իրենց նպատակու-  
կէտ ունենալով, որոնց աջակցութիւ-  
նը ոչ նուազ քաջաբերական մը պիտի  
ըլլար մեզ համար :

## Յ. ԱՎՓԻԱՐ

ԱՅՎԱՅԱՆ «ՆՈՐ-ՕՐ», ՄԻՋԱԳԻՊԻ  
Ա Ռ Թ Ի Ի

Գաճիքէ 14 Յունիս 1901

Սիրելի փափագեան :

Ձեր և Առաջնորդարանի միջև ծագած մի-  
ջակցը՝ որ այնքան կարգեցնէ մտքերը թէ՛  
հայ շրջանակներու և թէ՛ օտար մասնույն  
մէջ, ինքնին շատ անսովոր երեւոյթ մը ըլ-  
լալուն, բնականաբար չի կրնար անտարբեր  
թողուլ որ և է հայ մը. որ մասնաւոր ինձի  
պէս, ամեն մեղքին վրայ, խմբագիր ալ ե-  
ղած է իր կորուսեալ ծամերուն :

Թերևս ոչ ոք ինձ աւելի ուշադիր է այն  
պարձուածքներուն՝ որոնցմէ ծնաւ այդ գա-  
տը և որուն համար թերևս շատեր կը ցա-  
ւին, բայց ես, ընդհակառակը, չէք կրնար  
երկակայել թէ որքան ուրախ եմ :

Ամեն բանէ առաջ, կը շնորհաւորեմ զձեզ,  
սիրելի փափագեան, այն համակրանքին հա-  
մար որով կը շրջապատեն զձեզ, եղիպտո-  
սայերու զարգացեալ և անհասարակագր  
մեր երուպոցի պաշտօնակիցները, փաստա-  
բաններու ատենարը և ձեր անձնական բարե-  
կամները :

Իւ յետոյ, ներքեզ որ այս երկտողով  
բացատրեմ թէ ինչ կը մտածեմ սոյն դատին  
վրայ զոր Առաջնորդարանը ձեզի դէմ բա-  
նալու տխրութիւնը ունեցած է. . . ձեր  
անձնական լինումներու ոխակալ հնարամը-  
տութեան զոհ երթալով :

Ես չեմ ըսեր թէ ձեր «Պատասխան մը»  
վերնագրով յօդուածին համար Գեր. Այվազ-  
եան Եղիպտոսը օրհնութեան կողակ մը  
դրելու էր ձեզի : Այլքան բրիտանական  
ներգամաութիւն՝ եկեղեցոյ խիստներու  
բով իսկ փնտել իմարութիւն պիտի բլլար  
օ՛հ ոչ, կը հասկնամ նոյնպէս թէ Տէր  
Մամբէ չայր չի կրնար նշարհք մը դըր-  
կել ձեզի ձեր. . . գործագրութ առդերուն  
փոխարէն, այդ ալ կրնանեմ, բայց, կուր-  
քն հետեկ և գործիք դանաչ տեսակ մը. . .  
խորհրդ ու կանխիկու շարաթու intrigue  
ներուն և թող ալ որ Ազգային երկու պաշ-  
տօնական անուններ պիտար փոխեն խառն  
գատարաններու առջև, ասիկայ geffoսըն  
է որ ապահովագէս մեր Սրբազան Առաջ-  
նորդին պահանջի կողմը չենք կրնար անց-  
նել՝ հակառակ Նորին Գերապատութեան  
անձին համար ս նոյնքան մեր մեծ ակնածան-  
քին :

Խնդիրներ, գործեր կան՝ որոնց մէջ գա-  
տարանները խառնուելու չեն նոյն իսկ եթէ  
իրենք խառն ըլլան :

Այդ կարգի ինքիներէն այն է ձերը՝ որ  
աւելի պատշաճ կերպով կարելի էր լուծել  
եթէ. . . փաստարաններու և կամ աւելի  
ճիշտ է ըսել, փաստարանի մը հաճոյք պատ-  
ճառելու փութկոտութիւնը չունենար Գա-  
ղափակաւ ժողովը որ, ա՛հա, ուզուածին  
չափ ֆաղափալով չի գտնուեցաւ ասանկ  
փափուկ պարագայի մը մէջ :

Ինչ որ ալ ըլլայ, դ՛ուք, իբրև խմբագիր,  
հպարտ ըլլալու իրաւունք ունիք ասանկ  
խնդիր մը ստեղծած ըլլալու համար :

Գատեր կան որ կորուսելով հանդերձ շա-  
հաբեր կըլան իրենց տերերուն :

Գուք այս պարագային մէջն էք այժմ.  
Ես՝ խմբագիրներ պիտեմ, որ այս պահուս,  
ձեր տեղը գտնուելու համար հոգի կուտան,  
խեղճերը :

Առաջին անգամ ըլլալով դուք ինքնայրը  
կըլլաք հաւերային կարծիքին որ մինչև  
այսօր Առաջնորդարանի գունէն ներս մտնե-  
լու կրտունքը չունէր :

Ձեզի դէմ գատ կը բանան, և la bon-  
heur, ա՛հա կը նշանակէ թէ կընդունին  
հանրային կարծիքի մը գոյութիւնը, որուն  
բերանն է լրագիրը :

Բայց ասիկայ յաղթութիւն մին է որուն  
համար երախտագէտ ըլլալու են ձեզի Ե-  
ղիպտոսի ապագայ Հայ խմբագիրները :

Գատը շահիք թէ կորսնցնէք, դուք մեծ  
ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլաք  
քաղաքիս հայ գաղութին :

Այսուհետև, ես, դուք, Գրիգորը, Պետրոսը, Կիրակոսը իրաւունք պիտի ունենանք երեսն ի վեր ըսելու մեր Առաջնորդին:

— Բարեւ, Սրբազան, Չեր Գերապատուութիւնը, սաստեղ տալ ուզելով խմբագիր մը, ըսել կուզէք թէ նախանձախնդիր էք Ազգային արժանապատուութեան, կղերականներու prestigeին, և Առաջնորդարանի աստուծոյն, շատ լաւ, Աստուած զրկեց ձեզի, մենք արդէն ձեզի պէս Առաջնորդի մը ախար կը քաշէինք կոր. արդ բանի որ աստուծոյ ազգաշէն արամադրութիւններ ունիք, ուստի կը պահանջենք որ ականջ զնէք մեր խնայութեանը և թող չի տաք որ այսուհետև Գերազանց Ժողովոյ անդամ ընտրուին մարդեր որ ազգին պատիւ չեն բերեր, մի ներէք որ հոգաբարձու ըլլան երիտասարդներ՝ որ ամեն բան կրնային ըլլալ ասանց հոգաբարձու կարենալ ըլլալու, ուշադրութիւնները դարձուցէք վարժարանին վրայ՝ որքան արդի տիւրք վիճակը բարոյրեցնու համար Բենեօ կեղծման տնօրէններու պէտք չունիք, թող մի տաք, Սրբազան, որ այսուհետև խմբորէր համար ասանձախնդրեցալ ազգասաներ միայն պատուը քաղեն Գալստեան կտակին, թիչ մը աւելի ժողովրդական ընել տուցէք մեր քահանաները, սակաւին կուզէք որ շարունակենք Սրբազան, կարծեմ բաւական է, չէ, և եթէ զեռ բան մը մտոցանք, ներողամտ եղէք:

Դուք, սիրելի փափազեան, այլ բաները պրպտելու իրաւունքը տուիք ժողովրդական: Այսուհետև ամեն անհատ իրաւունք պիտի ունենան քննադատել ինչ որ ուզող չէ, ինչ որ պարկեշտ չէ և ինչ որ վնաս կը բերէ Ազգին շահերուն և պատուին:

nous allons rire, սառը վստահ կրնաք ըլլալ:

Մի ընկրկիք, թող տուէք որ դատը տեսնուի, և եթէ կորսնցնէք իսկ, միւս կողմէ լաւագոյն բան մը պիտի շահիք . . . ճշմարտ ազգասիրներու համակրութիւնը:

Միայն, վերջացնելէ առաջ, ներեցէք որ պզտիկ խորհուրդ մը տամ ձեզի: Ես երբ խմբագրութեան սկսայ, մեր տան բարեկամներէն բանի մը հոգի, մօրս ըսած էին թէ՛

— Տղադ ասոր անոր դեմ բաներ կը զըրէ կոր, թիչ մը ականջը քաշես նէ գէշ ըլլար:

Խեղճ, բարի մայրիկս, իրիկուն մը՝

— Չաւակս, ըսաւ ինձի — ցառ մը որ ալիս չպիտի ըսեմ, ա՛ւալ — ինչ կուզես ըրէ, միտակ աւերակներուն հետ մ'իյնար:

Մայրական այդ պատուէրը պահել ուխտած եմ:

Դուք ալ ինձի պէս ըրէք և Vous vous trouuere zmieux:

Ընդունեցէք, Սիրելի փափազեան լաւագոյն զգացմանցս հաւատսին:

Յ. Ա. ՓԻՍՏ

ՉԱՅՆ ՄԸ ԿԻՊՐՈՍԻ ՈՐԲԱՆՈՅԸՆ

Նոր-Օր ազգագուս Լրագրի:

Ստ.

Ներկայից կը զրկեմ Չերդ Պատ: Խմբագրութեան մի գրութիւն Գեր-Պետրոս վարդապետ Սարաճեանի կողմէն ուղղեալ առ իմ մայրս Տիկին Գ. Գազանճեան՝ Կիպրոսի Որբանոցի

տնօրէնութեան: և իմ Վերջում միջև ծագած տխուր միջադէպին առթիւ, ինչպէս նախ ի պատասխանի մեր զիտողագիրն, խնդրելով որ հաճիք ազգագուս թերթիդ միջոցաւ արձագանգ հանդիսանալ մեր ամենաբարձր բողոքներուն որ մեծ վերաբերութիւն ունին Հայ ազգի կենսական շահերուն հետ. բողոքներ, որ ի վեր կը հանեն մութիւն մէջ գործուած անհամար զեղծումներ և որ արձագանքն են անպատի մէջ խեղդուած ձայներու:

Ընդունեցէք, մեր խորին յարգանաց հաւատարմքն

ՄԻՆՈՒՆ, ԳԱՋԱՆՃԵԱՆ

Մի բանի շարժանքէն ի վեր հրապարակին վրայ խօսքը մեր Լեւոնին և Կիպրոսի կրթարանի Որբանոցի շուրջը դառնալով, ազգային տեսակէտով խիստ կենսական և մանուսնող որբերու կեանքին հետ կապակցութիւն ունեցող կարեւորագոյն խնդիր մը ըլլալուն պատճառաւ, հարկ համարեցինք լրագրական ասպարէզը հանել զայն և թողուլ հանրութեան դատաստանին: Ահաւասիկ ինչորոշն հոս տեղի ունեցած մասերուն ամփոփումը:

Երբ մի օր կը զիմեմ Տր. Քէչէճեանի եղբորս Լեւոնի վրայ տեղեկութիւն առնելու, Պ. Քէչէճեան ինձ կը յայտարարէ թէ Լեւոն իրաւ ըմբոս ըլլալուն պատճառաւ տնօրէնութեան կողմէն պատիժի ենթարկուած է և մեզ ալ կը յորդորէ որ Լեւոնի խրատական նամակ մը զըրենք. բայց մենք որ Լեւոնէն նամակ ստացած էինք որ իր կրած ծանր պատիժներէն կը զանդատէք և ժամ յառաջ կրթարանէն հեռանալ կը փափաքէք, նկատելով որ փոխանակ ուսուցիչները մարմնական աշխատութեանց կը ծառայեցնեն— ուղղակի տընօրինութեան նամակ մը զըրեցինք մօրըս ասորագրութեամբ խնդրելով որ տղան մեզ վերադարձնեն, քանի որ այլ ևս կարելի չէ զինք պահել. միայն թէ այդ նամակին մէջ մասամբ խիբ՝ յիշեցուցինք թէ եթէ Տնօրինութիւնն Լեւոնէն քանդառելու պատճառներ ունեցած է, կրթարանի ներքին կեանքըն ալ բարձրովն քննադատութենէ զերծ չէ. այս խօսքերէն Տնօրինութեան շրջին թռուտ ելած, նամակը Պ. Քէչէճեանի կը վերագրուէ, պահանջելով որ յետոս կոչուով ընենք.

Լեւոնի հետզհետէ գրած ծանր զըժ-դոհութիւններէն բարձրովն յուզուած, Տր. Քէչէճեանէն խնդրեցինք որ ինքն ալ միջամտէ ազուն վերագրման, բայց նա կանոնադիր յառաջ ըլլելով, պիտեց թէ ազուն վերագրման անկարելի է. հետեւաբար մօրս ստորագրութեամբ նամակով մը զիտեցինք Արթ. Տ. Պետրոս վարդապետ Սարաճեանի իբր նախագահ Տնօրէն խորհրդոյ, որպէսզի գէթ ինքը կարենայ ինչորոշ արագ լուծում մը և մեր փափաքին զոհացում մը տալ:

Վերոյիշեալ կրկին գրութիւններն առաջին առթիւ հրատարակութեան պիտի տանք. ինչ որ ստորև պիտի կարդաք հիմայ, նախագահ Հայր Սուրբի նամակն է ուղղեալ առ մայրս:

Ազգասէն Նիզոսիա Յունիս 1/14 901 Կրթարան-Որբանոց Կիպրոսի

Բարեպաշտուհի Տիկին Գուրգէթ Գազանճեան ի Գահիրէ:

Չեր Յունիս 8 թուակիր գրութիւնն ստացայ. Չեր մայրական սիրտը ան-

զորացնելու համար՝ կը փութամ յայտնելու որ Լեւոնի կացութիւնը Չեր կարծածին պէս չէ եղած ամենակին, ոչ անցեալին մէջ և ոչ ալ հիմայ. իր պատճոյ նիւթարկուելուն առաջին պատճառն իր ըմբոստ վարմունքն(1) էր և հարկ չ'պիտի զինէր նորանոր դժգոհութեանց եթէ չի շարունակէր իր յամառութեանը մէջ՝ զոր ոչ մէկ դպրոց և ոչ մէկ դատարան և ոչ մէկ հայր կամ մայր պիտի թողնար: Իր ստացած պատիժները յոյժ չափազանցեալ կերպով հազորդած լինելու է Չեր. իբրև ծեծ երկու թիթեւ ապտակ(2) միայն ստացած է մին միւսէն 15 օրի չափ վերջը, առաջինը Տնօրէնին ձեռքէն և երկրորդն՝ նոյն իսկ ինձմէ(3): Խոհարարին սենեակը պատկած է ժամանակ մը(4) որմէ ոչ

(1) Խիստ գոհ պիտի մնայինք եթէ Հայր Սուրբը հաճէր բացատրել թէ այդ ըմբոստ վարմունքն ինչ բանէ յառաջ եկած է. եթէ հաւատանք տղուն գրութեան որով կը յայտնէ թէ ինքը գտնուած աշխատելու համար պէտք եղածին չափ ժամանակ չէ ունեցած և խնդրած է տնօրինութեան որ իրեն աւելի միջոց մը տրուի աշխատութեան — բայց ոչ մարմնական — այլ պարագային մէջ, տնօրինութիւնը փոխանակ պարտաբար ըլլալու և ազուն այդ ընթացքին մէջ ըմբոստութիւն տեսնելու և զինք ծեծի կայտախճաներու ենթարկելու, խոհարարին և քաղցրութեամբ համոզելու էր թէ աշխատութիւնն ընդհանուր էր և իւրաքանչիւր աշակերտ պարտէր իր բամբակ կատարել. — եթէ այդ մարմնական աշխատութիւնը հաւատարապէս բաժնուած էր — բայց մենք այս խոհարարին հարց իրաւունք չունեցինք տալու տնօրինութեան մը որ երկար տարիներու փորձառութիւնը ունի, կ'ըսեն . . .

(2) Արդէն մեր այ գիտնալ ուզած կէտերէն մին այս էր թէ տղան ծեծուած է թէ ոչ. խիստ գոհ ենք յայտնելու որ Հայր Սուրբը իր ամբողջ միամտութեամբ կը հոստովանի թէ երկու ապտակ զարնուած է, միայն լաւ կ'ընէր որ ինչպէս զըրէ այդ թէքին բարոյն, վանդի ինչպէս կը տեսնուի, իբր բաժին չափ թեթեւ չեն, բանի որ ապտակներու ձայնը մինչև հոս արձագանք գտած է. և յետոյ այժմ ամեն ոք իրաւունք ունի հաւատարմ. թէ այս ծեծին հեղինակները ամեն շահ սինին ինչորոշ թեթեւեւութեամբ ծածկելու կամ խեղճութեամբ մէջ. Ապտակին թեթեւութեան տոտիմանը կերպովն պէտք է հարցնել. արդեօք ապտակը բաժնուած էր փայլէ կը նշանակէ:

(3) Ապրիլ Հայր Սուրբ. մրցանակ մ'ալ ձեզ կը վայելէ այդ ապտակահարութեան մրցման մէջ. շիտակ ձեզ նման դատարարակներու . . . ծեծին տակ, ազգը կրնայ վստահ ըլլալ թէ որբերը լաւագոյն կրթութիւն մը պիտի ստանան և հանրապետ քննադատ. Արեւարանին մարդապետ հասկցեր է որ մէկ երեսին զարնուած ապտակը բաժնուած է և ամբողջացուցեր է: Բայց ազնիւ ընթերցող, դիտել և մանուսնող գոհ եղիր որ երկու ապտակներն յաղորդաբար չ'են զարնուած, այլ 15 օրուան միջոցի մէջ . . .

(4) Մեր քննութեան առարկաներէն մին ալ խոտոտված է Հայր Սուրբը իր պարզա-մբոտութեան մէջ թէ յիբաւի տղան խոհարարին սենեակը պատկած է, բայց կը յաւելու թէ ատիկ որ և է անպատեհութիւն մը չկրնար ծագել եղեր — բայց երբ մայր մը իր գտնակն գրած հետեւեալ տողերը կը կարդայ, ինչ տպաւորութիւն կունենայ — ձեզ կը թողում դատել ազնիւ ընթերցող:

«Որովհետև ոչ թէ միայն աշխատանքէ ալ և ուրիշ բաներէ ալ զգուած եմ. ուստի մանրամասնութիւն մի ինքեք երբ հոս գամ ամեն բան տեղնուտեղօք ձեզ կը պատմեմ»: Այո՛, մայր մը կորորեն կրնայ հաւատալ իր զակին գրածին և գուցէ տղան ալ չափազանցած ըլլայ, բայց երբ Հայր Սուրբն է որ կը զըր թէ տղան խոհարարին սենեակը պատկեցուցած են . . . բայց ինչ տեսակ մտքերու ծնունդ պատիժներ են ասոնք:

մէկ անպատեհութիւն կրնար ծագել և այդ խոհարարն ուրիշ մէկը չ'է այլ իրեն հասակակից դպրոցական մը, որ չորս տարի հոս մնալէ յետոյ հայրենիքը երթալու տեղ այդ պաշտօնը(5) ընտրած է: Սովորական ժամանակաց մէջ(6) Լեւոնի կատարած մարմնական աշխատութիւն թէ սակաւով և թէ չափով ճիշդ և նման է ուրիշ աշակերտներու — թուշկատըր և ձրիալարժ — աշխատութեանց:

Իրաւէ որ իբր պատիժ դատաստութիւնէ զրկուեցաւ և ուրիշ աշխատութիւններ տրուեցան իրեն բայց ասոնք ալ իրապէս ծանր բաներ չէին, բայց իբր տարօրինակ կամակորութիւնը զանոնք խոշորացուց իր աչքին: Ասոնցմէ դուրս ծեծի, բանտի, ճիւղակեղէն փոխելու արգելքի զրոյցներ բուրբովին անհիմն են: Արդէն իրեք շաբաթէ աւելի է որ Լեւոն ներողութիւն խնդրեց և խնդրին ալ ինքնին փակուե-

(5) Ալ հոս կ'արժէ Որբանոցին կրթական մակարդակը ծափահարել. իմացէք, այդ հասակակից դպրոցականը չորս տարի կըրթարանին մէջ մնալէ յետոյ խոհարարի պաշտօնը ընտրած է . . . չէ՛. մեծ յառաջդիմութիւն. ալ աւելից յետոյ կրնանք խոհարարի համար յանձնարարութիւն տալ այդ Որբանոցին. չեմք կրնար ըմբոսի թէ հարկուսեալ աշակերտի վրայ մէկ հոս ուղի խոհարար ըլլալ. նոյն իսկ շատ ուսուցիչներ կրնան ամեն տեսակ արհեստի ծառայել, ի բաց առեալ խոհարարութիւնը: Բայց վշտով կ'ըսեմ թէ եթէ այդ խոհարար տղան ալ ձեր տըրուած կրթութեան շնորհիւ խոհարար մնացած է, մեղքը ձեր վրայ. բայց գոնէ վերագրուեցէք Լեւոն որ ուսման ցանկացող ըլլալուն համար անհոնջ եղած է ձեզ:

(6) Ըսել է թէ Լեւոնի համար անտուր ժամանակներ ալ եղած են մարմնական աշխատութեան թէ՛ տեսակով և թէ՛ չափով . . . այսքան բացատրութեան յետոյ ալ տարբերութիւն չենք գտնել Հայր Սուրբի գրածներուն և Լեւոնի հետեւեալ զանգասներուն մէջ:

«Երբ ստուտուուն անկողնու կեղծեմ, կամ կը լուսացուիմ կամ ոչ, կ'սկսին աշխատեցնել և այնպիսի ծանր գործեր կուտան որ կարողութեան վեր է. երբ ըսեմ որ միտակ չեմ կըրնար ընել, այդ խօսքը ըսելուս համար կը բարկանայ (Տնօրէնին համար ըսել կուզէ). եթէ անգամ մ'ալ կրկնեմ կ'սկսի ապտակել. բայց ինչ ընեմ ձայն չեմ կրնար հանել. կեբակուրէ կը զրկեն, հագուստի մասին ալ ունեցածներէս զատ չպիտի տան. երբ գնացի ճեղքակեղէն ուղեցի ըսաւ որ ալ դուն իրաւունք չունի որ և է բան մը տոնելու. ուրիշ անախարժ գործ մ'ալ տուիմ, ալ չէ գործարանին աղոտութիւնը վերցնելը եթէ այսպէս շարունակուի, զիտեցէ որ մեծ հեւանութեան մը ենթակայ պիտի ըլլամ»: Ինչ կըսէք դուք անշահախնդիր անօրէն. այս պարտաճանքն ճշմարիտ են. և եթէ ճշմարտեն, տղուն բարոյականը կ'սպաննեն և կրնան մեղսել տղուն մէջ ամեն աշխուզացումներ: Իսկ դուք որբանոցի Հայր Սուրբ, քննեցիք այս կէտերը, ստուգեցիք ճշմարտութիւնը. ըսէք, կը ինչորոշ, գէթ այս զըրուածներն ամենքն ալ ձեր զրպարտութիւնն են և ձեր գրածին պէս բողոքովն անհիմն են և այս վերջին բառը գործածած աստեանիկ ձեռքերնիդ ձեր խղճին վրայ զըրէ . . . և յետոյ ինչ կը նշանակէ աշակերտ մը դատաստութեան զրկել շաբաթներով իբր պատիժ. կարծես միմիայն նպատակ ունիք շահագործել անոնց մարմնական աշխատութեան:

ցաւ(7), բայց շատ ցաւալի է որ Չեր կողմէ յուսացուած յորդորական նամակի առկա խիստ զիտողազիր մը միայն կը զրկուի Տնօրէնին որ գործուած յանցանքին նախկինով շատ աւելի ներքաւ մտորար(8) վարուեցաւ, և ի՞նչ այդ զիտողազիրը Տօրթօր Գեշէճեանն է՞: Գրկուեցաւ այս մտքով էր որ հասկըցուի թէ անոր պարունակած անվայել բացատրութիւնները(9) դուր յարմար դատած է՞ր ի՞նչ ոչ ուրիշի մը խելքին ծնունդ են: Հարկաւ չ'էք մոռցած ալ որ Տօրթօր Գեշէճեանի յանձնարարութեամբ և վկայութեամբ միայն ընդունուած է Լեւոն և մենք ձեզի հետ թղթակցութիւն չ'ենք ունեցած ասկէ առաջ: Գայով Լեւոնի վերադարձուելու պահանջին, կը ցաւիմ' ըսելու որ կանոնը մեզի թող չի տար որ ներկայ պարագայից մէջ Չեզի գոհացում տանք(10): Գաւք ալ գիտէք որ ամեն աս-

(7) Այո՛, խնդիր փակուած կրնաք նկատել, որովհետեւ նախ այս տեսակ խնդիրներու բացուիլը ախորժելի չիրար ըլլալ ձեզ համար. մեք ալ կը փափաքէինք որ նոյն խել այս տեսակ խնդիր մը բնաւ գոյութիւն չունենար, բայց անպահ մը որ տեղի տուած էր արեւմտի ներքեզ որ բիշ մ'ալ շարահանինք. նախ ինչ գնուծ միջոց մ'է որուն անօրինութիւնը դիմած է ստիպելով տղան որ մեզա-յազիր մը ստորագրէ. մ'ի չգիտեր թէ այդ տեսակ գրութիւններ որք ճնշման ներքեւ առնուած են, որ եւ նշանակութիւն չունին. բան տերու մէջ հեծեծող խեղճերուն իրենց կամքին հակառակ, բռնութեան ներքեւ ըրած խոստովանութիւններուն կը նմանի, փակուած կղզիի մը մէջ, կղզիացուցած էք աշակերտներն ալ և կը ջանաք խեղճել ամեն բողոքի ձայն որ կրնան, բարձրանալ կրթարանի դէմ և խիստ հակողութեան և գրաքննութեան կենթարկէք աշակերտներու գրութիւններն որոնք իրենց ծնողաց ուղղեալ են և տղայք հաշիւ միջոց մը կը գտնեն իրենց վիշտերն բացատրելու և միշտ կը վախնան թէ մի՞ գուցէ Տնօրինութիւնը տեղեկանալով, զիրենք տեսիլ միծ պատիժներու ենթարկէ:

Այսօր միայն մեր Լեւոնը չէ որ այդ գանգանները կրնէ. երկրորդ մ'ալ կայ որ նոյնչափ զգուստօք կուզէ հեռանալ այդ հաստատութիւնէն և կը խնդրէ որ ժամ յառաջ զինքը փրկեն ասկից:

(8) Այդ ներողամտութեան համար մասնաւոր շնորհակալութիւն. չենք գիտեր թէ զեռ բան մը մնացած է ընելու՝ պատժահար անօրէնիին համար:

(9) Այդ անվայել բողոք չենք ընդունիր և ինչ որ գրուած էր նամակին մէջ մեր գիտակցութեամբ և մեր համոզմամբ գրուած էր, վստահ չեղիր:

(10) Գուցէ չէք ուղի մեր գաւազը յանձնել. բայց թէ այս վայրիեանէն հրապարակաւ կը բողոքենք այդ բռնարարման դէմ և կը յաւելուինք թէ ձեզ այլ ևս չենք վստահիր մեր Լեւոնի կեանքը որուն համար զձեզ անձնապէս պատասխանատու կը ճանչանք արդարութեան առջև. ասկէց յետոյ որ և է պատմի մը ենթակուիլը վրեժառուութեան զգացման պիտի վերադրենք և կը պահանջենք որ Լեւոն հոս Առաջնորդարան զրկուի ուր կազմուի վստահելի անձերէ յանձնաժողով մը որ քննէ եղելութիւնները և ըստ այնմ պատժէ յանցաւորներն: Մենք ինչպէս սղան նոյնպէս դատը ազգային իշխանութեան խնամոց կը յանձնենք, միայն կրկնելով թէ Լեւոնի հոս կրելիք որ և է հարցաքննութիւն մեզ համար ընդունելի չիրար ըլլալ, և մեր աղքատութեան մէջ պարտատ ենք Լեւոնի ճանապարհածախսը վճարել հոս Առաջնորդարան ինչպէս որ կանխաւ ալ յայտարարած ենք:

չակերտ իւր մօրը սուլած առեն վերադարձնել հարկ ըլլալ՝ բարեկեցիկութեան կողմէ: Որքանոցին նուիրուած գրումներ և աղայոց համար գոհուած ջանքեր պարտապ տեղ վստահուած պիտի ըլլային: Բնաւ կը յորդորեմ զՉեզ որ հոգ չ'ընէք Լեւոնի մասին և վրտասաչ ըլլաք որ այս տեղ ամէն աշակերտ ընտանեկան յարկին մէջ եզարծի պէս ելծէ ոչ աւելի խնամք և սէր կ'վայելէ: Թէ և չ'ենձկարծեր որ պատասխանա ստանալէ յետոյ միևնոյն խնդիրը կրկնէք կամ այդ մտքով Չեզ ծերութեան մէջ դէպի հոս անօգուտ ճամբորդութիւն մը կատարէք՝ բայց վստահ ալ եմ որ ի՞նչ գալու ըլլաք աչքով պիտի տեսնէք թէ հայրական հոգածութեան և անձուէր հակողութեան ներքեւ կը գտնուի Չեզ որդին և ոչ թէ այնպիսի ձեռքերու մէջ որք սողուն բարոյականը կ'ապանեն ինչպէս որ անխղճօրէն գրած է Չեզ նամակը գրող անգէտ և անխոհեմ անձը, ով որ է:

Ողբունելով զՉեզ մնամ աղօթարար  
ԳԵՏՐՈՍ ԱՍՐՈՒՍԱԾԵԱՆ  
Նախագահ Տնօրէն Խորհրդոյ  
Որբամոցիս

**ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ**

Մեր Կ. Պոլսոյ մասնաւոր թղթակցից հետեւալը կը գրէ.

Կ. ՊՈԼՍՈՒ 16 ՅՈՒՆԻՍ 1901  
Յունաց նորոգելի Պատրիարք Եօագիմ. Պոլսոյ հրապարակին տիրող շաբթօրուան կարեւոր գեղարքն մին եղած է Յունաց Պատրիարքին ընտրութիւնը: Երեկուան նիստին մէջ որ տեղի ունեցաւ Ֆէնէրի Պատրիարքարանը՝ Ամեն. Տ. Եօագիմ Գ. Յունաց Պատրիարք ընտրուեցաւ տասն և ութը միտքայալիներու միաձայնութեամբ:

Կարելի չէ նկարագրել այն անհուն ոգեւորութիւնը որ կը տիրէ երեկուան ի վեր Պոլսական յոյն ահումներու մէջ:

Ընտրողական ժողովոյ նախագահ Տ. Նաթանիէ ընտրութեան ձեռնարկելու առաջ յատենի ժողովոյ ազգու ճառ մը արտասանեց զոր տեղական թերթերէն շատերը տպեցին:

Տ. Նաթանիէի ճառին ոգեւորչ մասերը կ'արժէ որ ծանօթացնեմ Ձեզ:

Տ. Նաթանիէ ըսաւ:

«Այսօր հոս հաւաքուած ենք վերջին նիստ մը գումարելու, և վերջնականապէս երեք ընտրելեաց մէջէն ընտրելու համար մեր Տիեզերական Պատրիարքը, այն որ Օրթոտոքութեան իրաւանց գերագոյն պաշտպանը ու անոր սեպհակոմարութեան վարիչը ու վերին պահպանն է:

«Ամէն նախանձանիտիքի ազգային պէտք է ուրեմն համոզում գոյացնէ թէ՛ այդ բարձրագոյն հրամանատարն ու վարիչը, որուն պիտի յանձնենք այսօր մեր ազգին՝ սուր այն քան սուրբ՝ պէտք է ըլլայ էն ազնուազոյն եկեղեցականը, պէտք է միացուցած ըլլայ յանձին իւր հոգեկան ու բարոյական ամէն բարձր յատկութիւնները, անքնաւտարելի բարոյական ու, վսեմ մտածումներն:

«Վստահ եմ թէ զուր, եկեղեցականներն և հասարակութեան ներկայացուցիչներ, նրկատի աննելով հասարակութեան գերագոյն շահը, պիտի տաք ձեր քուէն լաւագոյնին»:

Յետոյ սկսաւ քուէարկութիւնը որուն մասնակցեցան նախ եկեղեցականները և ապա աշխարհականները:

Երեք ընտրելիները եղան Տ. Եօագիմ Գ. 83 քուէ, Քիտի Միտիպոլիտը՝ 73, վառնալիք՝ 69:

Քուէարկութիւնը աւարտուելով վերջը, բոս սովորութեան եկեղեցականները իջան և, զեցի, և ի ներկայութիւն աշխարհական անգամներու ու ժողովրդեան ստուար բախտութեան մը, միաձայն հաւանութեամբ ընտրեցին Յունաց Տիեզերական Պատրիարք՝ զՏ. Եօագիմ Գ.:

Եօագիմ Գ. ծնած է Պոլսոյ գիւղ (Կ. Պոլս) 1834 Յունուար 30ին: Չանազան գաւառներու մէջ միտրապոլիտի պաշտօններ վարելով վերջը, 1878ին Յունաց Պատրիարք ընտրուած, աւ 1883 Գեկիտ. 31ին հրաժարական տալով քաշուած էր Այնթորի վանքը, ուր պիտի ստանայ իր վերջնորութեան հետագիրը:

Եօագիմ Գ. իբր նախկին Պատրիարք արդէն մեծ ծառայութիւններ մատուցած է ազգին, հիմնելով սարկաւազներու կղերանոց մը, էֆէնսիաւսքիֆ Ալիքիսա հանգիւղը, Գնալիի ձերբու անկեղանոցը, Պատրիարքարանի տպարանը, Ֆէնէրի զարոյցը, որոնք իր նախաձեռնութեան արդիւնքն են:

Աշխարհական խնդիրք. — Սովորաբար գիշեր ցերեկ իր ուշադրութիւնը պարձուցած է Ալպանական և Մակեդոնական շարժումներուն վրայ:

Բայց և այնպէս մեծ վախ չունի: Անցեալները Երլարգի պալատին մէջ դիւանագետի մը ըսած է թէ՛ «Ալպանական խնդիրը այնքան չի մտածեցներ զիս որքան Հայկական խնդիրը: Ալպանացիք որքան գոհուէ, որքան գոմթեցին կազմեն՝ կարելի չէ որ Հայ յեղափոխական կոմիթէներու դերը կրնան կատարել»:

Չի մոռնաք դիտել տողու թէ խօսքը Ալպանացուց վրայ է, ոչ թէ Մակեդոնացիներուն որոնք Հայերէն շատ աւելի բարձր են իբր յեղափոխական գործիչ:

Ալպանացիք պատրաստուած են մտաբեր չնովի մէջ յեղափոխական գոհուէ մը գումարել, որուն պիտի երթան մասնակցին մեծաւ մասամբ Եւրոպա գտնուող Ալպանացիներ: Գոնիլէն մի ուղերձ զրկած է Խաւրիոյ Բաղամէնուլին և խնդրած է Խաւրիոյ պաշտպանութիւնը: Բաց ատու Ալպանական պատգամաւորութիւն մը դիմած է Խաւրացի հայրենասերներու և խնդրած է որ յանուն քաղաքակրթութեան և Լատին ցեղի եղբայրակցութեան, աշակցին Ալպանական անկախութեան ստացման: Յիշած են Կաթիպալտիի այն խօսքը թէ՛ «Ալպանիա իմն է»: Թէ՛ ապագային Ալպանական ինքնօրինութիւն մը միակ թուան է ընդդէմ Աւստրիոյ, Սերպիոյ և Պոլսի պատերազան ձգտումներուն:

Բ. Գուրը սակայն խորամանկ միջոցներու դիմած է յեղափոխական գործիչներուն վարկը կոտորելու և այդ նշանաւոր Գոնիլէն ազգեցութիւնը նուազեցնելու համար, ինչպէս որ ըրած էր Հայկական խաղութիւններու ասանը: Կրնամ ըսել թէ այդ միջոցները մասամբ իւրից պոսկուած են յաղորդութեամբ: Այն է թէ՛ Ալպանիոյ բոլոր քաղաքներուն մէջ ժողովներ կազմուած են, որոնք հանրապրութիւններ կը պատրաստեն Ալպանացի մեծամեծներու ստորագրութեամբ, յայտարարելով թէ՛ իրենք երբեք չեն ճանչնար այն յեղափոխական գործիչները որ յանուն ժողովրդին ազատութեան ձայն կը բարձրացնեն, թէ՛ իրենք այդպիսի մակնճա մը ոչ տուած են ատոնց ոչ ալ տալու պէտք ունին, քանի որ իրենք Սովորաբար գոհ են և կուզեն հաւատարիմ մնալ ընդ միշտ:

Այս ասի: Չեզի միջանկեալ ըստ մը աստ որ ինչպէս անհունութեան Չեզի ևս անհունութիւն: Յոյն գաղութի միջանակներէն Պ. Միքիմովիչ և Պ. Էօմէնիսին, որ Եօագիմի պատրիարք ընտրուելէն առաջ, ընտրութեան հետեւալ օրը յանկարծ Պոլսէն կը մեկնին Աթենք, ուրիշ ըստ կը զրկեն թէ՛ այլ ևս Յոյն ազգը իրենցմէ օգնութիւն թող չի սպասէ ոչ աղքատի և ոչ ալ զարոցի համար: Սակայն Եօագիմ Գ. այնքան կը յարգուի Չարիֆիէն և ուրիշ շատ մը հայրենասերներէ, որ զբարձր պէտք եղած ատեն աչքը նեղուիլուն չի կրեր իր շնորհիւ:

Գայով Մակեդոնական խնդրոյն՝ Բ. Գուրը միշտ օգտուելու վրայ է Պուլկարիոյ և Ռուսիոյ բռնած քաղաքականութիւնէն, ճշմունչը և ինչպիսիւ համար Մակեդոնական յեղափոխականներու ձայնը, ինչպէս որ ասկից առաջ օգտուեցաւ Հայկական խնդրոյն մէջ՝ եօթն ուրբութեանց անհամաձայնութիւնէն:

**ԳԱՅԷ-ԱՐՄԵՆԻԷՆ**

Մի քանի օրէ ի վեր Գաֆէ-Արմէնիէնի յաճախորդներն ցաւ ի սիրտ կը տեսնէին իրենց բոյնին քայքայուած և մինչև իսկ աւերակայ վրայ հանդչող բուրբու նման, իրենց սրտին մօտիկ այդ հաստատութիւնէն չբաժնուուելու համար, վերջին օրերուն մէջ տակաւին կուգային բազմիւ փրատակներուն մէջ գտնուող աթոռներուն վերայ: Այնպէս կը կարծենք թէ այդ հաստատութիւնն գէթ քսան տարուան գոյութիւն մը ունեցած է և այս պարագային կրնայ պարծանք մը նրկատուիլ հիմնադիրներուն համար, սրտք գիտցած են բուսական ամուր հիմերու վրայ հաստատուել զայն և ըստ կարելոյն երկարել անոր կեանքը, քանի որ մեր մէջ հազուադիւս կրնանք նկատել այնքան երկարակեաց ընկերութիւններ: Յիշեալ ընկերութեան ներքին կեանքն մօտէն ուսումնասիրողներուն և անոր պատմութեան լաւատեղեակ անձանց կը թողուէր զրել մանրամասնօրէն անոր ստացած գիրքին, համբաւին, կարեւորութեան և օգտակարութեան վրայ, անոր ունեցած բարդաւաճման և մերթ ընդ մերթ կրած անկումներուն վրայ, ինչպէս նաև այն երկպառակութեանց վրայ որք ընկերութեան, կեանքին պատիւներն են: Այս պահուն, երբ ուրիշ տողերը կը զրկենք, այլ ևս Գաֆէ-Արմէնիէն գոյութիւն չունի և կարելի չէ ալ գիտնալ թէ բաժնետէրերը պիտի ուզեն շարունակել զորմ մը որ նոր զօհողութիւններ կը պահանջէ, թէ ոչ իւրաքանչիւր սր պիտի ուզէ իւր բաժնին տէրն ըլլալ յիշեալ ընկերութեան մնացած գոյքէն: Գաֆէ-Արմէնիէն ոչ միայն իբր հոյ կեզրուն մը կարեւոր գիրք մը գրուած էր, այլ իւր յաջողութեան զլխաւոր գաղտնիքներէն մին պէտք է նկատել «Բարեգործական ընկերութիւն» անունը որով օժտած էին այդ հաստատութիւնը ու հիմնադիրներն:

որոնք իրենց ընկերութեան կանոնա- գրին մէկ էական պայմանը ընդու- նած էին զուտ շահուն 250/0ը տալ՝ հաւասարապէս բաժնուելու համար ազգատիրն՝ և վարժարանին մէջ:

Չենք ուզեր ընեն թէ այդ պայմա- նը ինչ խորհուրդէ կամ ինչ զգացու- մէ թելադրուած մուտ գտած է պայմա- նագրին մէջ. ոմանք զայն ազգասի- րական կամ ազգատարական ոգոյն կը վերագրեն. ոմանք շահասիրական ոգոյն. իսկ շարամիտներ ալ կան որք նոյն իսկ կը հեղինակէ այդ «Քարե- գործական ընկերութիւն» անունը որոյ ներքե զուտ առևտրական գործ մնէ որ կը շարունակուի, կ'ըսեն և եր- բէք իր կողման չհամարադատանքը եսայն:

Միայն արդար ըլլալու համար կըր- նանք յաւելուլ թէ գէթ ուրիշ օտար սրճարաններու վրայ սա մեծագոյն առաւելութիւնն ունեցած է որ միշտ իր շահէն բաւականաչափ բաժին մը հանած է ազգատիրն ու զպրոցին մինչ- դեռ ուրիշ որեւէ սրճարաններու մէջ կուտանք մեր դրամն և չենք կըր- նար որեւէ իրաւունք մը սպասել:

Յիշատի թէ ընկերութիւնն ցարդ ազատ եղած է այդ բաժինն վճարել և կամ իւր իսկ ձեռամբ և իւր գիտ- ցած եղանակով զայն գործածել իր նպատակին և ի պատիւ պատուարժան վարիչներուն՝ կը փութանք յաւելուլ թէ ցարդ չեն թերացած այդ բաժ- նին վճարման մէջ այդքան երկար շրջանի մը միջոցին, միայն թէ այսօր լաւագոյն աղբիւրէ տեղեկանալով կը գրենք թէ 171/2 ամիսներէ հետէ աղ- քատին և վարժարանին իրաւունքն ե- ղող այդ բաժինն որ գրեթէ 50—60 ոսկոյ մօտ գումար մը կը կազմէ, դեռ չէ գործածուած իւր նպատակին և մինչև իսկ ոմանք կ'ըսեն թէ այդ գումարը վար դրուած է արդի վա- րիչներուն կողմանէ ընկերութեան դը- րամագրութիւն պահած մասը մաքու- շացնելու համար ելն. ելն. Մենք այսպիսի զրոյցներու երբէք չենք ու- զեր կարևորութիւն ընծայել և պիտի գիտնանք համբերել մինչև այդ ըն- կերութեան հաշուեյարդարութեան վայրկեանը և եթէ անարդարութիւն մը տեղի ունենայ, մենք ինչպէս նաև ազգին որեւէ մէկ անհատը, իրաւունք պիտի ունենանք պահանջելու որ ինչ որ աղքատինն է՝ աղքատին տրուի և ինչ որ բաժնետիրոջ՝ բաժնետիրոջ:

ՀԱՄԻՍԱՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՊԻՓՏՈՍԻ ԽՏԻՉԸ

Ասկէց մէկ քանի շաբաթ առաջ տեղական թերթ մը կը գրէր թէ՝ Համիսասական ընկերութիւն մը կազ- մուած է, իսլամութիւնը տարածել ու վառ պահելու համար ամէն երկրի մէջ:

Այս ընկերութիւնը վերջերս քաղա- քական յայտարարութիւն մը հրա- տարակելով ուշադրութիւնը կը հը- րաւէ մահմետականներուն դէպի Ե- գիպտոսի Խտիչը:

Իբր թէ Խտիչ Ապպաս փաշա թա- քուն միջոցներով կ'աշխատի եղեր Սուլթանի ձեռքէն խել Խտիչպաշա- թիւնը, անկախ թագաւորութիւն մը կազմել ու զինք հռչակել Խալիֆա իսլամներուն:

Իբր թէ Խտիչ Ապպաս իր նպա- տակին կարենալ հասնելու համար, Եգիպտոս փախչող սրբան ժէճն-թիւր- քեր կան, անոնց բարոյական ու նիւ- թական ամէն օգնութիւն կ'ընէ եգիւր, որոյէպի անոնք ալ ի հարկին եթէ պէտք ըլլայ յեղափոխել, իրեն կու- սակից ըլլան:

Յայտարարութիւնը իր վերջնաբա- նին մէջ, կոչ կ'ընէ համարէն միւսլի- մաններուն և օտար պետութեանց գա- հընկէց ընել Եգիպտոսի Խտիչը, ու էն վերջը հրաւեր կը կարգայ ակա- նաւոր Իւլէմայներու, որպէսզի օժակ- ցին այն կարևորագոյն առաջարկին:

Եգիպտոսի Խտիչը իր ազարակնե- րովը զրազիլ կը սիրէ, որքան խալի- ֆայով:

ԹԱԳԱ ՓԱՅԱ

«Փիլոսոֆիս» և «Էլ Լիւրալ» օրա- թերթներու տէր և տնօրէն Պիշարա փաշա թագալայի յուղարկաւորութեան հանդէսը մեծ շուքով կատարուեցաւ անցեալ շաբաթ օր, ցերեկէն վերջը ժամը 4ին:

«Փիլոսոֆիս» ընդարձակ կենսագ- րական ծանօթութիւններ տուած է թագալա փաշայի վրայ, որի նշանակե- լի մասեր կ'ամփոփենք ոտորև:

«Պիշարա թագալա, խալի թագալա- յի որդի ծնած է 1852 Օգոստոս 22 ին Լիբանանի լեռը: Իր եղբայրը Սէլիմ իբն էրբ տարու մեծ էր:

«Սուրիոյ վարժարաններու մէջ նախնական կրթութիւն և ուսում ըն- ղունելէ վերջը, Եգիպտոս կուգայ 1874 թուականին: Սէլիմ իբր առջի- նէ՛լ՝ արաբերէն լրագրի մը հրատա- րակութեան արտօնութիւն կը խընդ- րէ այն ատենուան խտիչ իսմայիլ փաշայէն, և կը ստանայ: Երկու եղ- բայր ձեռք ձեռքի կ'ուսան կ'աշխա- տին: Միմային կը խմբագրեն, կը շարեն, մինչև անգամ թերթերը իր- ենք կը ծալեն, ինչպէս որ «Ն/ս-Եօրֆ հէրայոս» սկզբնաւորութեան եղած էր:

«Պիշարա թագալա քաղաքական խնդիրներու վրայ անկախ, ազատ ուղջախոհ կարծիքներ սկսած էր յայտ- նել լրագրին մէջ. Եբր 1879ին Ե- գիպտոսի դրամական տագնապը կը ծագի, Պիշարա թագալա կը հրատա- րակէ յօդուած մը «Մեարդարութիւն հանդէպ Ֆէլլահին» խորագրին տակ: Իսմայիլ փաշա յօդուածը կարդալուն պէս հրաման կ'ուսայ որ թագալան ձերբակալուի, ու իր ներկայութեանը բերուի: Թագալա ամենայն պաղար- ինութեամբ իր վեհապետին ներ- կայացաւ ու անկէ ուղղակի բանտ ա- ռաջնորդուեցաւ ուր երեք օր անցու- նելէն վերջ՝ ազատ արձակուեցաւ: Բայց թերթը խաբանուեցաւ: Վերջը

նորէն սկսու հրատարակուիլ: Այն- քան ուղիղ և զգայուն է որ երբ 1878 ին իլ հայրը կը մեռնի, թագալա կը երթա Սուրիա ու իր հայրը որքան պարտք ունէր, հին նոր կը մաքրէ ու կը վերադառնայ: 1867ին իր Պո- լիս ազնորութեան ատենը՝ կը ներ- կայանայ Սուլթանին: Պոլիսէն վեր- ջը՝ Եւրոպայի բոլոր զլլաւոր բա- զարները կը պտտիչու ծանօթութիւն կը հաստատէ լրագրական, դիւանա- ղիտական կարևոր անձինքներու հետ: Պատեհատութիւ մ'ալ կը ներկայացուի Ռուսիոյ Չարին, վերջապէս իր կեան- քը միշտ գործունէութեան և արդիւ- նաւորութեան շրջան մը եղած է:

Թագալա փաշա՝ իր եղբոր Սէլիմ փաշայի մահունէն վերջը «Էհրալ» շարունակելով հանդերձ անցեալ տա- րի ալ Յրաններէն լեզուա «Փիլոս- ֆիս» հիմնեց, որ պիտի շարունակէ ըստ առաջնոյն դարձեալ հրատա- րակուիլ:

Սուլթանը երբ ուկնդրութեան կըն- դունի թագալա փաշան առաջին լաւա- քը կ'ըլլայ: Վստահ եմ Չեր անձ- նութիւնները վրայ, և ասոր միակ սպացոյցն ալ այն է որ ամեն օր մեծ հաճոյքով կը կարգում Չեր էհրալ լրագիրը: Եարունակեցէք այս ուղ- ղութեամբ և կրնաք վստահ ըլլալ թէ պիտի վարձատրուիք»:

Արդարեւ մինչև ցայսօր Սուլթանը կը շարունակէ ստանալ «Էհրալ»ը: Թագալա փաշա փոքրիկ միջազէպ մ'ալ անցուցած է Նուպար փաշայի հետ: 1884ին Նուպար փաշայի նա- խարարութեան օրով՝ թագալա խիստ յօդուածներով Եգիպտական կառա- վարութեան վրայ կը սկսի յարձակիլ, քննադատելով անոր գործերը: Նու- պար փաշան ալ ընդհակառակը սոս- կալի կերպով կ'ատէր այն լրագիր- ները որ կը քննադատէին կառավա- րութեան գործերը, չէր այն նախա- րարներէն որ ազատ կը թողուն լը- րագրի մը քննադատել ինչ որ ծուռէ: Նուպար փաշա սպառնալիք ըրաւ թագալայի՝ նախարարաց խորհուրդ գումարեց և էհրալ զատապարտե- ցաւ: ու վերստին սկսաւ հրատարակ- ուիլ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Պատեհազմի դաշտէն.— Հարաւային Աֆ- րիկէն հասած նամակներու նայելով՝ մեծ ճակատամարտ մը տեղի ունեցած է Մայիս 10ին Վարմայի մտերը՝ ուր Անգլիացիք բաւական թուով հողի կորուսած են, բացի 250 կառքերէն որոնք թշնամին ձեռքը յանձնած են:

Հարթակոթ Փօնթայի կուռն մէջ մաս- կուռն մէջ նմանապէս Պոէրները յաղթած են մինչև իսկ մէկ երկու քաղաքներու տիրած են ինչպէս Բուսթէնպուրի, Գլըքսթորֆ և այլն: ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՑՈՑՑԵՐ Պուլչարական Յեղափոխութեան 25րդ տարեդարձը մեծ ոգևորու- թեամբ տօնուեցաւ երկրին զանազան կողմերը, և մեծ ցոյցեր տեղի ունեցան: Ատենախօսութեանց միջոցին՝ ժողո- վուրդին մէջէն ատելութեան ձայներ լսուեցան Ֆէրիմանտ իշխանի դէմ: Ատենաբաններէն մին իշխան Ֆէրիմ- նանտը անսաւանց «Թիւրք փաշա»:

Ուրիշ մ'ալ «Չարին կօշիկները ներ- կաշ» Յետոյ մի ահագին բազմու- թիւն հաւաքուելով իշխանին պալա- տին առջև, սկսան քարիօծել պատու- հանները, սատիկանութիւնը միջամը- անց, ու արիւնալից կոխներ տեղի ունեցան:

Բոսնիցակ Պուլչարիոյ մէջ՝ ատե- լութեանէն զատ արիւ շահ չենք տես- ներ Ռուսիոյ դէմ: Այն օրէն ի վեր օր Մակեդոնական յեղափոխական կամի- տէի անգամները և գործիչները ձեր- փակուեցան, սրուն մէջ Ռուսիան մատ ունէր, Պուլչար ժողովուրդը իր համակրութիւնը բարձաւ Ռուսիոյ վը- րայէն:

ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆ ԸԿԵՐՈՒԹԻՒՆ

Հարուն-Ընթերցատան Գործ. Վարչու- թիւնն հաճելի պարտք մը կատարած կը հասարի՝ ընկերութեան երախտագրական զգայունաց հաստատութիւնը հանդի- տանալով, հանդէպ հետեւեալ աշխու- սութեան սպացոյցներու՝ որոնց նուիրատու- թելիւնները խրատուեցին մեզ մեր զոյգը՝ նախարարներուն մէջ, Ընթերցատան բաց- ման ատիւն:

Իրանական նուիրատու Երիւն	Գ. ուղ
Տիար Աստրել Պէրդէրեան	150
» Սեդրաք Օտուպաշեան	100
» Վիրապո Շաբոբեան	60
» Կարապետ Երզնկացեան	40
» Արտաշէս Յովհէսեան	40
» Յակոբ Քիւրքեան	40
» Արմենակ Էքմէքեան	40
» Սարգիս Գարբինեան	20
» Յարսի թիւն Ահարեան	10

Ընթերցատան բացման օրը պիտի գոյացած, գանազաններէ 79 թերթեր

Գեր. Ալվազեան Սրբազան, մէկ տարեկան «Սուրհանդակ», «Մասիս» և «Արեւի. Մա- մաւ»:

Տիար Աստրել Պէրդէրեան, մէկ տարեկան «Անահիտ» և «Ելիկեղեցի» և «Շարժում»:

Տիար Նազարէթ Աղապար, մէկ տարե- կան «Արեւի»:

Տիար Արմենակ Էքմէքեան մէկ տարեկան «Նոր-Վեանք». Տիար Հայկ Գալիմոսեան մէկ տարեկան «Արտ»։ Տիար Վահան Ատիւ- եան, մէկ տարեկան «Իրո-Արմենիա». ոմն, մէկ տարեկան «Արմենիա». Տիար Քրիստոս տար թէ՛ վերջին մէկ տարեկան Չայն-Հայ- րենեայ»։ Տիար Սեդրաք Օտուպաշեան, մէկ տարեկան «Աճալ փոխիքի և Լիբեռա»:

Գոյներ Տիար Աստրել Պէրդէրեան մէկ տարեկան տար և արձեւորուր լատար: Տիար Սեբաս Բիւրատ, (նախապէս նուիրած) մէկ գրասե- ղան: Տիար Երուստիմ Գարաբաշ, մէկ պահա- րան Ազգ. առաջնորդարան, մէկ թիկնաթու: Ենթահարկութիւն նոյնպէս այն ազնիւ ազգայիններու, որոնք այս առթիւ նուիրեցին այլ և այլ գիրքեր, նուիրատուներու անուն- ները արձանագրուած են ընկերութեան տոմարներուն մէջ:

Ա Ձ Դ կը ծանուցանենք արգոյ հասարակութեան թէ՛ Հարուն-Ընթերցատանը բաց է Լրբեր- շարիկը, Հինգշաբթի և Շաբաթ օրերը, երե- կոյեան ժամը 7էն մինչև 11. իսկ Կիրակի օրերը՝ ժամը առաւօտեան 10էն մինչև գի- չերուան 11ը: Իրան Գործ. Ժողովոյ (Կնիք)

Le Gérant J. MUNIER

Տպա. «Միւսիլի Ե».— Թ. Ս. Փափագեանի